Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ
Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 25th June 2023 Bulletin 28/2023

Fourth Sunday after Pentecost

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՄԷԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 7:25-8:11

Շնորհակալութիւն Աստուծոյ՝, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: Ուրեմն ես ինքս միտքով կը ծառայեմ Աստուծոյ Օրէնքին, իսկ մարմինով՝ մեղքի օրէնքին:

Ուրեմն հիմա դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմինին համաձայն չեն ընթանար. քանի որ կեանքի Հոգիին Օրէնքը՝ Քրիստոս Յիսուսով ազատեց զիս մեղքի եւ մահուան օրէնքէն: Արդարեւ ինչ որ Օրէնքը անկարող էր ընել, որովհետեւ մարմինը տկարացուցած էր զայն, Աստուած իրագործեց. իր Որդին ղրկեց՝ մեղանչական մարմինի նմանութեամբ եւ մեղքին պատճառով, ու դատապարտեց մեղքը այդ մարմինին մէջ, որպէսզի Օրէնքին արդարութիւնը գործադրուի մեր մէջ՝ որ չենք ընթանար մարմինին համաձայն, այլ՝ Հոգիին: Արդարեւ մարմինին համաձայն ապրողները՝ կը մտածեն մարմինին բաները, իսկ Հոգիին համաձայն ապրողները՝ Հոգիին բաները. նաեւ մարմնաւոր մտածումը մահ է, իսկ հոգեւոր մտածումը՝ կեանք ու խաղաղութիւն: Արդարեւ մարմնաւոր մտածումը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, քանի Աստուծոյ Օրէնքին չի հպատակիր. մա՛նաւանդ չի կրնար ալ, որովհետեւ մարմինին համաձայն ապրողները չեն կրնար հաճեցնել Աստուած:

Բայց դուք չէք ապրիր մարմինին համաձայն, հապա՝ Հոգիին համաձայն, եթէ իսկապէս Աստուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, ինք անորը չէ: Սակայն եթէ Քրիստոս ձեր մէջ է, մարմինը մեռած է մեղքին պատճառով, իսկ Հոգին կեանք կը պարգեւէ արդարութեան պատճառով: Ու եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին բնակած է ձեր մէջ, ուրեմն ա՛ն՝ որ մեռելներէն յարուցանեց Քրիստոսը, կեանք պիտի տայ նաեւ ձեր մահկանացու մարմիններուն՝ իր Հոգիով, որ կը բնակի ձեր մէջ:

The Epistle of St Paul to the Romans 7:25-8:11;

Thanks be to God, who delivers me through Jesus Christ our Lord!

Life Through the Spirit

Therefore, there is now no condemnation for those who are in Christ Jesus, because through Christ Jesus the law of the Spirit who gives life has set you a free from the law of sin and death.

For what the law was powerless to do because it was weakened by the flesh, b God did by sending his own Son in the likeness of sinful flesh to be a sin offering. c And so he condemned sin in the flesh, in order that the righteous requirement of the law might be fully met in us, who do not live according to the flesh but according to the Spirit.

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

Those who live according to the flesh have their minds set on what the flesh desires; but those who live in accordance with the Spirit have their minds set on what the Spirit desires. The mind governed by the flesh is death, but the mind governed by the Spirit is life and peace. The mind governed by the flesh is hostile to God; it does not submit to God's law, nor can it do so. Those who are in the realm of the flesh cannot please God.

You, however, are not in the realm of the flesh but are in the realm of the Spirit, if indeed the Spirit of God lives in you. And if anyone does not have the Spirit of Christ, they do not belong to Christ. But if Christ is in you, then even though your body is subject to death because of sin, the Spirit gives life d because of righteousness. And if the Spirit of him who raised Jesus from the dead is living in you, he who raised Christ from the dead will also give life to your mortal bodies because of e his Spirit who lives in you.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 12:38-45

Այն ատեն դպիրներէն ու Փարիսեցիներէն ոմանք ըսին իրեն. «Վարդապե՛տ, նշա՛ն մը կ'ուզենք տեսնել քեզմէ»: Իսկ ինք պատասխանեց անոնց. «Չար եւ շնացող սերունդը նշան կը խնդրէ: Ուրիշ նշան պիտի չտրուի անոր, բայց միայն Յովնան մարգարէին նշանը:

Որովհետեւ ինչպէս Յովնան մնաց կէտ ձուկին փորին մէջ՝ երեք օր ու երեք գիշեր, այնպէս մարդու Որդին պիտի մնայ երկրի սիրտին մէջ՝ երեք օր եւ երեք գիշեր: Նինուէի մարդիկը դատաստանին օրը պիտի կանգնին այս սերունդին դէմ ու պիտի դատապարտեն զայն, որովհետեւ զղջացին Յովնանի քարոզութեամբ. եւ ահա՛ Յովնանէ մեծ մէկը կայ հոս:

Հարաւի թագուհին դատաստանին օրը ոտքի պիտի ելլէ այս սերունդին դէմ ու զայն պիտի դատապարտէ, որովհետեւ ինք եկաւ երկրի ծայրերէն՝ Սողոմոնի իմաստութիւնը լսելու. եւ ահա՛ Սողոմոնէ մեծ մէկը կայ հոս»:

«Երբ անմաքուր ոգին դուրս կ'ելլէ մարդէ մը՝ կը շրջի անջուր տեղեր, հանգստութիւն կը փնտռէ, ու չի գտներ: Այն ատեն կ'ըսէ. "Վերադառնամ իմ տունս՝ ուրկէ ելայ": Կու գայ եւ կը գտնէ զայն՝ պարապ, աւլուած ու զարդարուած: Այն ատեն կ'երթայ, եւ կ'առնէ իրեն հետ եօթը ուրիշ ոգիներ՝ իրմէ աւելի չար, ու մտնելով հոն կը բնակին. եւ այդ մարդուն վերջին վիճակը կ'ըլլայ առաջինէն աւելի գէշ: Ա՛յսպէս պիտի ըլլայ այս չար սերունդին ալ»:

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 12:38-45

The Sign of Jonah

Then some of the Pharisees and teachers of the law said to him, "Teacher, we want to see a sign from you."

He answered, "A wicked and adulterous generation asks for a sign! But none will be given it except the sign of the prophet Jonah. For as Jonah was three days and three nights in the belly of a huge fish, so the Son of Man will be three days and three nights in the heart of the earth. The men of Nineveh will stand up at the judgment with this generation and condemn it; for they repented at the preaching of Jonah, and now something greater than Jonah is here. The Queen of the South will rise at the judgment with this generation and condemn it; for she came from the ends of the earth to listen to Solomon's wisdom, and now something greater than Solomon is here.

"When an impure spirit comes out of a person, it goes through arid places seeking rest and does not find it. Then it says, 'I will return to the house I left.' When it arrives, it finds the house unoccupied, swept clean and put in order. Then it goes and takes with it seven other spirits more wicked than itself, and they go in and live there. And the final condition of that person is worse than the first. That is how it will be with this wicked generation."

Announcement:

Dear Parishioners,

We are being encouraged and asked constantly to pray for one another. Our Priest in Charge, Fr Nshan Alaverdyan is ready to oblige any request put to him, to pray in low, at the Altar, during Sunday Divine Liturgy. Your St Yeghiche Armenian Church Parish Council have prepared special forms which are placed at the entrance of the church. Please take a copy and fill accordingly and hand it to a member of the Parish Council at the door in order to include with all received requests.

In addition if you know of anyone who needs a visit at hospital or special prayers, our Priest is ready to oblige. Kindly inform a member of the Parish Council in order to organise.

Thank You

Լուսավորչի նշխարների գյուտը

Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտը հայոց մեծագույն սրբերից մեկի հիշատակին նվիրված երեք տոներից մեկն է:

Ըստ ավանդության՝ հայոց մեծ դարձից հետո Ս. Գրիգոր Լուսավորիչն իր կյանքի վերջին տարիներն ավարտում է ճգնակեցությամբ՝ Սեպուհ լեռան Մանեի այրում, որտեղ էլ վախճանվում է 326 թվականին: Նրա մարմինը գտնում են հովիվները, որոնք, չճանաչելով մահացած կաթողիկոսին, մարմինը ծածկում են քարակույտի տակ: Հետագայում Ս. Գրիգոր Լուսավորիչը տեսիլքով հայտնում է իր նշխարների տեղն աշակերտներից Գառնիկ Բասենցուն, որից հետո Հայրապետի նշխարները տեղափոխվում և ամփոփվում են Դարանաղի գավառի Թորդան գյուղում:

Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարները բոլոր քրիստոնեական եկեղեցիների ամենամեծ սրբություններից են: Հայոց Հայրապետի նշխարները գտնվելուց հետո նրանցից մի մասն իբրև սրբազան մասունք տարվել է Վաղարշապատ, Բյուզանդիա, Իտալիա: Մայր Աթոռ Ս. Էջմիածնում պահվող Լուսավորչի Ս. Աջը Հայ եկեղեցու կարևորագույն սրբություններից մեկն է, որով օրհնվում է սրբազան մյուռոնը: Ս. Գրիգոր Լուսավորչի նշխարների գյուտի տոնը նշվում է Հոգեգալստից հետո, չորրորդ շաբաթ օրը: Տոնի օրը եկեղեցիներում մատուցվում է Ս. Պատարագ: Տոնի առիթով Հայ եկեղեցին սահմանել է շաբաթապահք: Տոնն ունի նաև իր նախատոնակը:

Commemoration Day of the discovery of the Relics of St. Gregory the Illuminator

The Commemoration Day of the discovery of the relics of St. Gregory the Illuminator is one of the three significant feast days dedicated to the memory of the Patron Saint of Armenia.

According to Holy Tradition, following Armenia's conversion to Christianity, in his final years, St. Gregory led an ascetic life in the cave of Mane on the Mountain named Sepuh where he died in 326 A.D. Shepherds, finding his body, buried him not recognizing the Armenian Pontiff. One of his students, Garnik from Basen sees a vision, where Gregory identifies the location of his relics. The relics were thereupon transferred to the village of Tordan, in the province of Daranagh, and buried there.

Relics of Saint Gregory the Illuminator In Naples:

The relics of St. Gregory the Illuminator are one of our most revered within the Armenian Church, as well as all Christian Churches. Following their discovery, some were taken to various places for safekeeping, among them Vagharshapat (Etchmiadzin), Byzantium, and Italy. The Right Hand of the Saint, preserved in the Mother See of Holy Etchmiadzin, is one of the most important sanctities of the Armenian Church, and is used by the Catholicos of All Armenians during the blessing of the Holy Chrism (Muron). To commemorate the day, Divine Liturgy is celebrated in our Churches.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.
Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն

«Աստծոյ արդարութիւնն իր սրբերի վրայ է, եւ նրա ձեռքն անպակաս է Իր ընտրեալների վրայից» (Սողոմոնի Իմաստութիւն 4:15)

Քրիստոսասէր եղբայրներ եւ քոյրեր, Սուրբ Լուսաւորչի լուսակիր ժառանգներ,

Հայաստանեայց Առաքելական եւ Ուղղափառ եկեղեցու կարեւոր տօներից մէկն էր շաբաթ օրը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորչի նշխարների գիւտը: Կեանքի վերջին տարիներին Լուսաւորիչ հայրապետը քաշուեց մայրաքաղաքից եւ Էջմիածնից բաւական հեռու վայրեր՝ Դարանաղեաց գաւառ, ուր Սեպուհ անունով լեռան այրերից մէկում, ուր ճգնել էր սուրբ Մանէ կոյսը, ինքը եւս տրուեց ճգնութեան: Պատմահայր Խորենացին այս մասին պատմում է. «*Սուրբ Գրիգորը շատ տարիներ ծածկապէս մնալով Մանեայ այրում, մահուամբ փոխադրուեց հրեշտակների կարգը: Եւ հովիւները, նրան վախճանուած գտնելով եւ չիմանալով, թէ ով է նա, նոյն տեղում թաղեցին: ... Բաւական ժամանակ անց, երբ քրիստոնէութիւնն ուսուցանուեց եւ իւրացուեց այս կողմերում, Գառնիկ անունով ճգնաւորը յայտնութեամբ բերեց սուրբ Գրիգորի նշխարները եւ ամփոփեց Թորդան գիւղում*» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց): Սուրբի այս նշխարների գտնելու, գիւտի յիշատակութիւնն է այս տօնը, քանի որ այս զօրաւոր սուրբի մասունքներով բազմաթիւ են եղել հրաշքներն ու բժշկութիւնները : Մեր քրիստոնէական հաւատքի յիշողութեան հիմնասիւն է Լուսաւորիչը, Մայր Աթոռում պահուող իր մասունքակիր Աջով, ինչի մասին 17-րդ դարում Առաքել Դաւրիժեցի պատմիչը վկայում է, որ ամբողջ Հայոց ազգը կապուած է Սուրբ Աջին եւ Էջմիածնին. «*Ի վերայ Սուրբ Աջոյն եւ Էջմիածնի ամենայն ազգն Հայոց կապեալ կայ*»:

Քրիստոնէական եկեղեցում նշխարք կամ մասունք են կոչւում սրբերի ոսկորների կամ նրանց հետ առնչուած իրերի մասնիկները: Շատերի մօտ հարցադրում կա, թէ ինչո՞ւ են քրիստոնէաները պատւում սուրբերի աճիւններն ու ոսկորները, անգամ սրբերի հետ կապուած իրերը կամ առարկաները: Այս ընկալումը եկեղեցու մէջ կայ դեռ շատ վաղ շրջանից: Իբրեւ առաջին պատմական յիշատակութիւն, յայտնի է Բ. դարի «*Մարտիրոսութիւնք Պողիկարպոսի*» գրուածքը, ուր նահատակուած սրբի մասունքները գնահատւում են«*աւելի թանկ, քան ամենաթանկագին քարը, եւ աւելի ցանկալի, քան ամենաազնիւ ոսկին*»:

Հայոց մէջ յայտնի են Հռիփսիմեանց եւ Գայեանեանց կոյսերի նշխարների ամփոփումը եւ դրանց վրայ վկայարաններ կառուցելը, Յովհաննէս Մկրտչի եւ Աթանագինէս նահատակեալ եպիսկոպոսի մասունքները, որ Լուսաւորչի կողմից բերուեցին եւ դրուեցին նորակառույց եկեղեցիների հիմքերում: Տարածուեց նաեւ այդ մասունքները պահպանել յատուկ մասանց պահարաններում, որոնցից մեզ մօտ պահպանւում են համաքրիստոնէական նշանակութեան սուրբ Գեղարդը, Խաչափայտի կամ Սուրբ Նշանի, Փշէ պսակի, Նոյեան տապանի, Թադէոս առաքեալի մասունքները:

Թագաւորութեան Դ. Գրքում պատմւում է, թէ ինչպէս Եղիսէէ մարգարէն իր ուսուցչի՝ երկինք վերցուած Եղիայի վերարկուով խփում է ջրերին, ջրերը բացւում են եւ Եղիսէէն անցնում է գետի միջով:

Սուրբերի մասունքների միջոցով Աստծոյ հրաշագործ զօրութեան կատարեալ օրինակ է թաղուած մարգարէին ոսկորներից յարութիւն առնելու դէպքը: «Երբ թաղողները տեսան Մովաբի կողոպտիչ զօրքին, այդ մեռած մարդուն շտապ գցեցին գերեզման: Այդ մեռած մարդու դիակը Եղիսեէէի ոսկորներին դիպչելուն պէս հանգուցեալը կենդանացաւ ու կանգնեց իր ոտքերի վրայ (Դ. Թագ. 13:21):

Մարդացեալ Աստծոյ՝ Յիսուս Քրիստոսի երկրային կեանքը լեցուն է հրաշքներով եւ բժշկութիւններով: Առաքեալները եւ բոլոր սուրբ հայրերն աղօթքով եւ ձեռքի հպումով կենդանութեան էին բերում անգամ մեռեալների, եւ մինչեւ այժմ բազմաթիւ քրիստոնեաներ կարող են վկայել այն բազմաթիւ հրաշքներն ու բժշկութիւնները, որ տեղի են ունենում սուրբերի նշխարների, միւռոնի, աղօթքի, սուրբ անօթների կամ սրբապատկերների, խաչի եւ Աւետարանի միջոցով:

Կենսականօրէն կարեւոր է հաւատալ ու հաստատապէս ընդունել, որ բոլոր այս բժշկութիւնների եւ հրաշքների հեղինակն ու կատարողն Աստուած է՝ Ամենասուրբ Երրորդութիւնը: Աստծոյ Հոգով էին խօսում մարգարէները եւ գրում առաքեալները, Աստծով էին բժշկում եւ յարութիւն տալիս, զօրացնում եւ մխիթարում բոլոր այս մարդիկ, որոնք իրենց մաքրակենցաղութեամբ դառնում էին բնակարան Աստծոյ Սուրբ Հոգու: Իրենց խօսքի, աղօթքի, հպումի միջոցով Աստուած էր գործում, քանի որ առանց Աստծոյ մարդը ինքն իրենից չի կարող, ունակ չէ նման գործեր անել: Անգամ սրբակենցաղ եւ Հոգին կրող մարդու մահուանից յետոյ Աստուած կարող է հրաշագործել: Սա է պատճառը, որ բոլոր սրբավայրեր էլ քայլող ուխտաւորը յանդիպման ակնկալիք ունի միայն Մէկի հետ՝ Աստծոյ: Աւելին, ամէն քրիստոնեայ կարող է Աստծոյ նկատմամբ խոնարհ հաւատքով եւ աղօթքով զօրաւոր գործեր կատարել. «***Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, թէ ով հաւատում է ինձ, ինքն էլ կ'անի այն գործերը, որ ես եմ անում. եւ դրանցից աւելի մեծերը կ'անի, որովհետեւ ես գնում եմ Հօր մօտ: Եւ ինչ որ ուզէք իմ անունով, այն կ'անեմ, որպէսզի Հայրը փառաւորուի Որդու միջոցով*** (Յովհ. 14.12-13)

Եթէ հոգեւոր կեանքի կենտրոնը Աստուած չէ, մարդ կարող է յայտնուել եսապաշտութեան մոլորութեան մէջ եւ կուռքի պէս սկսի մեծարել իր անձը: Նոյն կերպ, եթէ մոռանանք սուրբի կամ մասունքի միջոցով գործող Քրիստոսին, կարող ենք մարդուն կամ որեւէ իր դարձնել կուռք եւ ընկնել կռապաշտութեան մէջ:

Աստծոյ Հոգին կրող եւ Հոգով գործող մարդն այլեւս իր կամքը կամաւորապէս ձուլում է Աստծոյ կամքին՝ կատարելապէս գործադրելով «***Եղիցին կամք Քո որպէս յերկինս եւ յերկրի***» քրիստոսաւանդ խօսքերը: Մենք ազատ կամք ունենք, որ ինքնակամ դնում ենք Աստծոյ կամքին ենթակայութեան: Պողոս առաքեալը բազմիցս խօսում է այս մասին, որ մկրտութեամբ մեր հին մարդը մեռնում է եւ քրիստոնեայի մէջ այլեւս գործում է Քրիստոս: Եւ ինչ էլ արւում է դրանից յետոյ, պէտք է ծառայի մեր հոգու փրկութեանն ու Աստծոյ փառքին: ***«…եւ ինչպէս միշտ, նաեւ այժմ, մեծարուի Քրիստոս իմ մարմնի մէջ թէ՛ իմ ապրելով եւ թէ՛ մեռնելով*** (Փիլ. 1:20)

Սուրբ Գրիգոր Լուսաւորչի թէ՛ բանտարկութիւնը, թէ՛ ազատումը եւ Հայոց Արքայի ու միւսների բժշկութիւնը, թէ՛ քարոզչութիւնն ու մկրտութիւնը, թէ՛ ճգնութիւնները եւ անգամ մահը ծառայել եւ մինչեւ այժմ ծառայում են մարդկանց հոգիների փրկութեան եւ Աստծոյ փառաբանութեան համար: Այս է պատճառը, որ Քրիստոսի եւ առաքեալների հիմքի վրայ կառուցուած բոլոր եկեղեցիները խորագոյն ակնածանք եւ մեծարանք ունեն Հայոց Լուսաւորիչ Սուրբ Գրիգորի (շատ օտար ազգերի կողմից՝ Գրիգոր Հայի) եւ նրա մասունքների նկատմամբ:

Թող Լուսաւորիչ սուրբ Գրիգորի հայրական բարեխօսութիւնը առաջնորդի մեզ Քրիստոսով քայլելու, ապրելու, կառուցելու եւ վկայելու, որ Աստված փառաւորւում է Իր սրբերի միջոցով:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհը, Աստծու սէրը եւ Սուրբ Հոգու հաղորդութիւնը ձեզ հետ լինեն: Ամէն: **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան**

DAILY BIBLE READINGS FOR 2023 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

26 June	**Holy Martyrs Antonius, Theophilus, Anectus, and Photinus** **Wisdom 3:1-8; Isaiah 48:16-17; 2 Timothy 3:10-15; John 15:11-16**
27 June	**Sts. Daniel the prophet and the three young men—Shadrach (Setrak), Meshach (Misak) and Abednego (Apetnakov)** **Daniel 2:1-49; Hebrews 11:32-40; Matthew 24:9-15**
28 June	**Romans 9:1-16; Matthew 13:1-8**
29 June	**Our Holy Translators Sts. Sahag and Mesrob** **Wisdom 8:7-10; Isaiah 61:6-9; 1 Corinthians 12:4-11; Luke 12:32-40**
30 June	**Romans 9:17-27; Matthew 13:16-23**
1 July	**Sts. Tiridates (Drtad) the King, Queen Ashkhen, and Khosrovitookhd** **Wisdom 6:2-10; Isaiah 45:1-2; 1 Timothy 2:1-7; Luke 11:14-23**

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By Dr Minas & Annie Minassian , Mr & Mrs Neshan and Joanna Minassian and family, Miss Nevart & Mr Gdrich Minassian for the soul of their Father who was also a loving Grandfather and Great Grandfather the late **ARAKEL NAJARIAN** on the 1st anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **NAJARIAN** and **MINASSIAN** Families. The late Arakel Najarian was born in Mousel, Iraq on 19th October 1934 and passed peacefully in Toronto on 13th July 2022.

By Mrs Aysen, Yasmin Lara and Lily Mutafyan and Family for the soul of their Husband who was also a loving Father the late **SEVAN MUTAFYAN** on the 3rd anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **MUTAFYAN** Family.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Hokehankist and in Liu of Flowers:
Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.
Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.**

Your kind donations are gratefully accepted:

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.